ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Իրավունքի Ինստիտուտի տնօրեն
Մ. Ա. Քալաշյան

ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
МИНИСТЕРСТВО НАУКИ И ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ РФ
РОССИЙСКО-АРМЯНСКИЙ (СЛАВЯНСКИЙ) УНИВЕРСИТЕТ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ПРАВА

« 04 » հուլիսի 2025 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Իրավունքի տեսության եւ Սահմանադրական իրավունքի

Հեղինակ՝ իր.գ.դ., պրոֆեսոր Ղամբարյան Ա.Ս.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Պետության եւ իրավունքի տեսություն

Բակալավրի կրթական ծրագիր՝ 042101.01.6 «Իրավագիտություն»

Դասիչ մասնագիտութուն՝ 042101.00.6 «Իրավագիտություն»

ԲՄԿ ՊՈՒՀ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան

1. Ներածություն

«Պետության և իրավունքի տեսություն» դասընթացը բակալավրիատի ուսումնական ծրագրի առարկաներից է: Այն բարձրագույն իրավաբանական կրթության առարկաների համակարգում զբաղեցնում է կենտրոնական տեղ:

Պետության և իրավունքի տեսությունը հումանիտար, հիմնարար, ընդհանրացնող և իրավագիտության համար մեթոդաբանական նշանակություն ունեցող գիտություն է՝ պետության և իրավունքի գոյության և զարգացման ընդհանուր և հիմնական օրինաչափությունների մասին:

Պետության և իրավունքի տեսության հիմնարար բնույթով պայմանավորված, այն փոխկապված է ոչ միայն ճյուղային իրավական գիտությունների, այլ նաև փիլիսոփայության, սոցիոլոգիայի, տնտեսական, պատմական և քաղաքական գիտությունների հետ:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում իրավաընկալման, իրավունքի համակարգի, իրավունքի տարբեր աղբյուրների վերլուծությանը, օրինաստեղծ գործընթացի առանձնահատկություններին, իրավահարաբերությունների, իրավունքի մեկնաբանման և իրացման խնդիրներին, իրավական կոլիզիաների լուծման և բացերի հաղթահարման, իրավախախտումների և իրավական պատասխանատվության խնդիրներին:

Պետության և իրավունքի տեսության գործնական արժեքը մասնավորապես դրսևորվում է իրավաստեղծ գործունեության ոլորտում իրավական ակտերի նախագծերի փորձաքննությունների անցկացման, իրավական տեխնիկայի կանոնների պահպանման, իրավական տեքստերի մեկնաբանման աշխատանքներ իրականացնելիս:

Դասընթացի կապն ուսումնական պլանի այլ առարկաների հետ: «Պետության և իրավունքի տեսություն» դասընթացը սերտ փոխկապված է «Պետության և իրավունքի պատմություն», «Իրավունքի փիլիսոփայություն», «Քաղաքագիտություն», «Փիլիսոփայություն» և այլ ուսումնական դասընթացների հետ:

Դասընթացի նպատակը և խնդիրները: Դասընթացի հիմնական նպատակը ուսանողների մոտ պետության և իրավունքի առաջացման, պետության տիպերի, ձևերի, գործառույթների, պետության մեխանիզմի, պետության քաղաքական համակարգում պետության տեղի և դերի վերաբերյալ գիտելիքների ձևավորումն է, իրավունքի հասկացության և էության, իրավագիտակցության, իրավունքի աղբյուրների, իրավունքի նորմերի, իրավական համակարգի, իրավաստեղծագործության, իրավակիրառման, իրավունքի մեկնաբանման, իրավաբանական պատասխանատվության մասին գիտելիքների ձևավորումն է,

ինչպես նաև մասնագիտական մակարդակի իրավագիտակցության և իրավական մշակույթի ձևավորումը։

Դասընթացի խնդիրները:

Դասընթացի շրջանակներում առաջադրվում են հետևյալ խդիրները.

✓Պետության եւ իրավունքի տեսության վերաբերյալ ստացած գիտելիքների հիման վրա իրականացնել հասարակական քաղաքական կյանքի պետահիրավական երևույթների, պետության և իրավունքի գոյության և զարգացման ընդհանուր և հիմնական օրինաչափությունների համեմատական իրավական վերլուծություն,

✓ձևավորել մասնագիտական արհեստավարժություն,

✓ձևավորել պետահիրավական երևույթները վերլուծելու, ստացված տեսական գիտելիքները ճիշտ կիրառելու կարողություն։

2.1. Կրթական վերջնարդյունքները: Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

իմանա՝

- Պետության և իրավունքի առաջացման հիմնական տեսությունները.
- Պետության տիպերի վերաբերյալ առկա մոտեցումները.
- Պետության ձևը և գործառույթները.
- Պետության մեխանիզմի կառուցվածքը.
- Պետության տեղը և դերը քաղաքական համակարգում.
- Մարդու, հասարակության և պետության փոխհարաբերությունները.
- Իրավաընկալման հիմնական հայեցակարգերը.
- Իրավունքի հասկացությունը, էությունը և սկզբունքները.
- Իրավագիտակցության տեսակները.
- Իրավունքի աղբյուրները.
- Իրավական համակարգի, իրավունքի նորմերի կառուցվածքը.
- Իրավաստեղծագործության, իրավակիրառման, իրավունքի մեկնաբանման. իրավաբանական պատասխանատվության էությունը.

կարողանա՝

- Հիմնավորել իրենց տեսակետը պետական-իրավական հարցերի վերաբերյալ, իմանալ իրավական հասկացությունները և դրանց սահմանումները.
- Իրավական հարցերի վերաբերյալ տալ մասնագիտական գնահատական.
- Կիրառել ձեռք բերված գիտելիքները գործնականում.
- Ինքնուրույն կատարելագործել մասնագիտական հմտությունները՝ հաշվի առնելով օրենսդրության, տեսության և պրակտիկայի զարգացումը.

ունակ լինի՝

- Վերլուծել նորմատիվ իրավական ակտերը.
-
- Առաջադրվող խնդիրների շուրջ բանավեճերի և քննարկումների մասնակացնել, սեփական կարծիքն իրավաբանորեն հիմնավորել.
- Վեր հանել օրենսդրական բացերը և կոլիզիաները:

2.2. Դասընթացի աշխատատարության բաշխումն ըստ ուսումնական աշխատանքի տեսակների (ակադեմիական ժամերով)

Դասընթացը ներառված է «Հիմնական մասնագիտական դասընթացների կրթաբլոկում» 5 ակադեմիական կրեդիտ (180 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 34 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 1 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	**Ընդամենը, ակադ. ժամեր**
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	**180**
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	**68**
1.1.1. Դասախոսություններ	**34**
1.1.2. Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	**34**
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	**112**
1.2.1. Քննություններին նախապատրաստում	
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝ (նշել)	
1.2.2.1. Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	
1.2.2.2. Էսսե և ռեֆերատներ	
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**քննություն**

2.3. Առարկայի ծավալը՝ 180 ժամ, կրեդիտ՝ «5» ECTS:

2.4. Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

ԲՄԿ ՊՈՒՀ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան

Առարկայի բաժինները և թեմաները	Ընդամենը	Դասախոսու-թյուններ	Գործնական / սեմինար պարապմունքներ
1	2=3+4	3	4
Թեմա 1. Պետության և իրավունքի տեսությունը որպես գիտություն: Պետության և իրավունքի տեսության առարկան և մեթոդը:	4	2	2
Թեմա 2. Պետության և իրավունքի ծագումը	8	4	4
Թեմա 3 Պետության տիպաբանությունը	4	2	2
Թեմա 4. Պետության հասկացությունը և էությունը	4	2	2
Թեմա 5. Պետության գործառույթները	8	4	4
Թեմա 6. Պետության ձևը	8	4	4
Թեմա 7. Պետության մեխանիզմ	8	4	4
Թեմա 8. Պետաիրավական համակարգը և տնտեսությունը: Քաղաքական համակարգը	4	2	2
Թեմա 9. Մարդու հիմնական իրավունքների հիմունքները	8	4	4
Թեմա 10. Իրավական պետություն և քաղաքացիական հասարակություն	4	2	2
Թեմա 11. Իրավաընկալման հիմնական հայեցակարգերը: Իրավունքի հասկացությունը և էությունը:	4	2	2
Թեմա 12. Իրավունքի սկզբունքները: Իրավունքի գործառույթները:	4	2	2

Ընդամենը	68	34	34

3. Դասընթացի թեմաները եւ ծավալները:

ՄՈԴՈՒԼ 1

Թեմա 1. Պետության և իրավունքի տեսությունը որպես գիտություն: Պետության և իրավունքի տեսության առարկան և մեթոդը

Պետության և իրավունքի տեսությունը որպես հումանիտար գիտություն: Պետության և իրավունքի տեսությունը որպես հիմնարար իրավաբանական գիտություն: Պետության և իրավունքի տեսության առարկայի բնութագիրը: Պետության և իրավունքի տեսության գործառույթները: Պետության և իրավունքի տեսության մեթոդները: Պետության և իրավունքի տեսության ուսումնական դասընթացը:

Թեմա 2. Պետության և իրավունքի ծագումը

Նախապետական շրջանի իշխանության և սոցիալա¬կան նորմերի ընդհանուր բնութագիրը: Պետության և իրավունքի առաջացումը: Պետության առաջացման արևելյան ճանապարհը: Պետության առաջացման արևմտյան ճանապարհը: Պետության առաջացման հիմնական տեսությունները:

Թեմա 3. Պետության տիպաբանությունը

Պետության տիպաբանության հասկացությունը և նպատակը: Պետության տիպաբանության ֆորմացիոն մոտեցումը: Պետության տիպաբանության քաղաքակրթական (ցիվիլիզացիոն) մոտեցում:

Թեմա 4. Պետության հասկացությունը և էությունը

Պետությունը որպես հասարակական-քաղաքական երևույթ: Պետության հասկացությունը և հատկանիշները: Պետության էությունը: Պետության և իրավունքի հարաբերակցությունը:

Թեմա 5. Պետության գործառույթները

Պետության գործառույթների հասկացությունը: Պետության գործառույթների համակարգը:

Թեմա 6. Պետության ձևը

Պետության ձևի հասկացությունը և տարրերը: Կառավարման ձևի հասկացությունը և տեսակները: Պետության կառուցվածքի ձևը: Պետական ռեժիմի ձևը:

ՄՈԴՈՒԼ 2

Թեմա 7. Պետության մեխանիզմ

Պետության մեխանիզմի հասկացությունը և էությունը: Պետական մեխանիզմի կազմակերպման և գործունեության սկզբունքները: Պետության մեխանիզմի կառուցվածքը: Պետական մարմին: Հասկացությունը և տեսակները: Պետական իշխանության լեգիտիմությունն ու լեգալությունը: Բյուրոկրատիզմը պետական մեխանիզմում:

Թեմա 8. Պետաիրավական համակարգը և տնտեսությունը: Քաղաքական համակարգը

Պետության և տնտեսության փոխհարաբերությունը: Իրավունքի ուսումնասիրությունը տնտեսագիտության տեսանկյունից: Քաղաքական համակարգի հասկացությունը և կառուցվածքը: Պետությունը քաղաքական համակարգում: Հասարակական միավորումները քաղաքական համակարգում: Քաղաքական համակարգի այլ մասնակիցները:

Թեմա 9 Մարդու հիմնական իրավունքների հիմունք¬ները

Մարդու հիմնական իրավունքների հասկացությունը: Սուբյեկտիվ և օբյեկտիվ իրավունքներ: Մարդու իրավունքների և ազատությունների դասակարգումները: Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումները: Իրավունքից հրաժարումը:

Թեմա 10. Իրավական պետություն և քաղաքացիական հասարակություն

Իրավական պետության գաղափարի ծագումն ու զարգացումը: Իրավական պետությունը և բնորոշ գծերը: Քաղաքացիական հասարակության հասկացու¬թյունն ու կառուցվածքային տարրերը:

Թեմա 11. Իրավաընկալման հիմնական հայեցակարգերը: Իրավունքի հասկացությունը և էությունը

Իրավաընկալման հասկացությունը և մեթոդաբանական նշանակությունը: Լեգիստական (պոզիտիվիստական) իրավաընկալում: Իրավաբանական իրավաընկալում: Սոցիոլոգիական իրավաընկալում: Ինտեգրատիվ իրավաընկալում:

Իրավունքի հասկացությունը, էությունը և հատկանիշները: Իրավունքի արժեքը:

Թեմա 12. Իրավունքի սկզբունքները և գործառույթները

Իրավունքի սկզբունքների հասկացությունը և նշանակությունը: Իրավունքի սկզբունքների տեսակները: Իրավական աքսիոմաները (մաքսիմները): Իրավունքի գործառույթների հասկացությունը և դասակարգումը:

4. Գրականության ցանկ

Հիմնական՝

1. Իրավունքի ընդհանուր տեսության հիմնախնդիրները: Ուսումնական ձեռնարկ: Գիտ. խմբ. Ա. Ղամբարյան: Երևան 2024, 492 էջ
2. Պետության և իրավունքի տեսություն (սխեմաներ և իրավիճակային խնդիրներ)/ Ա.Ղամբարյան, Հ.Ստեփանյան. Ուսումնական ձեռնարկ. «Տիր» հրատարակչություն, Երևան 2024
3. Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ (4-րդ լրամշակված հրատարակություն) /խմբ. Ա. Ղամբարյան, Մ.Մուրադյան, Երևան, Լուսաբաց հրատարակչություն, 2023
4. Марченко М.Н. Теория государства и права. Учебник. 3-е издание, переработанное и дополненное. М. Издательство: Проспект, 2012
5. Теория государства и права. Учебник. Коллектив авторов, отв. ред. А.В. Малько. 4-е изд., М.: КНОРУС, 2012
6. Теория государства и права. Морозова Л.А Учебник. 4-е изд., перераб. и доп. М., 2010
7. Теория государства и права. Учебник для юридических вузов и факультетов. Под ред. В. М. Корельского и В.Д. Перевалова — М.: Издательская группа ИНФРА-М- НОРМА, 2002:
8. Оганнисян Г.Г. Общая юриспруденция и юридическая методология. Учебник. Ереван, 2020 г.:

Լրացուցիչ գրականության ցանկ՝

1. Гамбарян А.С., Авоян К. Отказ от субъективного права и условия его закономерности. // Законность. N 91.2016, с. 23-33. (на армянском языке).

2. Гамбарян А. С., Даллакян Л. Г. Применение правовой доктрины в судебной практике: перспективы правового регулирования. Актуальные проблемы совершенствования законодательства и правоприменения: материалы V международной научно- пракрической конференции. г. Уфа, 2016, с. 22-25
3. Гамбарян А.С. Факторы, влияющие на судебную политику. Международная ассоциация содействия правосудию (МАСП/IUAJ) [электронный ресурс] http://www.iuaj.net/node/1324 (09.07.2013)
4. Гамбарян А. С. Даллакян Л. Г. Нормативный договор в системе источников права. //Судебная власть, N 7/120, 2009, с. 21-26
5. Толкование норм права: учебно-практ. пособие // А.В. Смирнов, А.Г. Манукян. – М.:Проспект 2008
6. Общая теория государства и права. Академический курс в трех томах. Ответственныйредактор М.Н. Марченко.М., 2007
7. Теория государства и права. Под ред. Пиголкина А.С. М., 2006
8. Байтин М.И. Сущность права М., изд. “Право и государство”, 2005
9. Теория государства и права. Черданцев А.Ф., Учебник М.: Юрайт-М, 2002
10. Проблемы общей теории права и государства. Учебник под общей редакциейакадемика В.С. Нерсесянца. М., 2002
11. Лившиц Р.З. Теория права. М., 2001
12. Нерсесянц В.С. Общая теория права и государства. – М., 2000
13. Марченко М.Н. Правовые системы современного мира. Учебник-пособие. М., 2008
14. Малько А.В., Соломатин, А.Ю.Сравнительное правоведение. Учебно-методический комплекс. М. 2008
15. Саидов А.Х. Сравнительное правоведение М., 2005

Լրացուցիչ գրականության ցանկ՝

1. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (ընդունված 1948թ. ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից):
2. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիա (ընդունված 1950 թ):
3. Տնտեսական, սոցիալական, մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր (ընդունված 1966թ.):
4. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր (ընդունված 1966թ):
5. Եվրոպական սոցիալական խարտիա (ընդունված 1961 թ.):
6. 1995 թ. ՀՀ Սահմանադրություն (2005թ. նոյեմբերի 27-ի և 2015թ. դեկտեմբերի 16-ի փոփոխություններով):
7. Հանրաքվեի մասին ՀՀ սահմանադրական օրենք (ընդունված 2018թ. մարտի

23-ին):
8. Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենք (ընդունված 2018թ. մարտի 21-ին):
9. Հանրային ծառայության մասին ՀՀ օրենք (ընդունված 2018թ. մարտի 23-ին):
10. Միջազգային պայմանագրերի մասին ՀՀ օրենք (2018 թվականի մարտի 23-ին):

Ինտերակտիվ կայքեր՝

1. www.arlis.am
2. www.parliament.am:
3. www.concourt.am

5. Հարցեր եւ առաջադրանքներ ուսանողների ինքնուրույն աշխատանքի համար

Հարցաշար

1. Պետության և իրավունքի տեսությունը որպես հումանիտար գիտություն:
2. Պետության և իրավունքի տեսությունը որպես հիմնարար իրավաբանական գիտություն:
3. Պետության և իրավունքի տեսության առարկայի բնութագիրը:
4. Պետության և իրավունքի տեսության գործառույթները:
5. Պետության և իրավունքի տեսության մեթոդները:
6. Պետության և իրավունքի տեսության ուսումնական դասընթացը:
7. Նախապետական շրջանի իշխանության և սոցիալական նորմերի ընդհանուր բնութագիրը:
8. Պետության և իրավունքի առաջացումը:
9. Պետության առաջացման արևելյան ճանապարհը:
10. Պետության առաջացման արևմտյան ճանապարհը:
11. Պետության առաջացման հիմնական տեսությունները:
12. Պետության տիպաբանության հասկացությունը և նպատակը:
13. Պետության տիպաբանության ֆորմացիոն մոտեցումը:
14. Պետության տիպաբանության քաղաքակրթական (ցիվիլիզացիոն) մոտեցում:
15. Պետությունը որպես հասարակական-քաղաքական երևույթ:
16. Պետության հասկացությունը և հատկանիշները:
17. Պետության էությունը: Պետության և իրավունքի հարաբերակցությունը:
18. Պետության գործառույթների հասկացությունը և համակարգը:
19. Պետության ձևի հասկացությունը և տարրերը:
20. Կառավարման ձևի հասկացությունը և տեսակները:
21. Պետության կառուցվածքի ձևը:
22. Պետական ռեժիմի ձևը:
23. Պետության մեխանիզմի հասկացությունը և էությունը:

24. Պետական մեխանիզմի կազմակերպման և գործունեության սկզբունքները։
25. Պետության մեխանիզմի կառուցվածքը։
26. Պետական մարմին։
27. Հասկացությունը և տեսակները։
28. Պետական իշխանության լեգիտիմությունն ու լեգալությունը։
29. Բյուրոկրատիզմը պետական մեխանիզմում։
30. Պետության ևտնտեսության փոխհարաբերությունը։
31. Իրավունքի ուսումնասիրությունը տնտեսագիտության տեսանկյունից։
32. Քաղաքական համակարգի հասկացությունը և կառուցվածքը։
33. Պետությունը քաղաքական համակարգում։
34. Հասարակական միավորումները քաղաքական համակարգում։
35. Քաղաքական համակարգի այլ մասնակիցները։
36. Մարդու հիմնական իրավունքների հասկացությունը։
37. Սուբյեկտիվ և օբյեկտիվ իրավունքներ։
38. Մարդու իրավունքների և ազատությունների դասակարգումները։
39. Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումները։
40. Իրավունքից հրաժարումը։
41. Իրավական պետության գաղափարի ծագումն ու զարգացումը։
42. Իրավական պետությունը և բնորոշ գծերը։
43. Քաղաքացիական հասարակության հասկացությունն ու կառուցվածքային տարրերը։
44. Իրավաընկալման հասկացությունը և մեթոդաբանական նշանակությունը
45. Լեգիստական (պոզիտիվիստական) իրավաընկալում
46. Իրավաբանական իրավաընկալում
47. Սոցիոլոգիական իրավաընկալում
48. Ինտեգրատիվ իրավաընկալում
49. Իրավունքի հասկացությունը, էությունը հատկանիշները
50. Իրավունքի սկզբունքների հասկացությունը և նշանակությունը
51. Իրավունքի սկզբունքների տեսակները
52. Իրավական աքսիոմաները (մաքսիմները)
53. Իրավունքի գործառույթների հասկացությունը և դասակարգումը

6. Ստուգումների անցկացման ձեւը եւ գնահատման չափանիշները:

Խմբային քննարկում. Նպատակը՝ մտքերի փոխանակում կոնկրետ առաջադրված տեսական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գնահատման չափանիշները՝ տեսական պատրաստվածություն, հղումներ հեղինակներին, սեփական կարծիքի հիմնավոր եւ տրամաբանական փաստարկվածություն, ակադեմիական ակտիվություն, գիտական էթիկայի պահպանման կարողություն:

Ելույթներ ըստ թեմայի. Նպատակը՝ թեմայի կամ հարցի խորացված ուսումնասիրում:

ԲՄԿ ՊՈՒՀ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան

Գնահատման չափանիշները՝ պատասխանի տրամաբանական կառուցում, տեսական եւ կիրառական գիտելինքների համադրում, օրինակներ բերելու ունակություն, տեսակետների պատճառաբանվածություն։

Ստուգարք. Նպատակը՝ ստուգել ուսանողների գիտելիքները եւ ելույթների վերլուծության ունակությունը ստացված գիտելինքերի արդյունքում։